ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

<< 15 >> ապրիլի 2014թ. N 32

ք. Արմավիր

2014 ԹՎԱԿԱՆԻ ՌՈՒՍԱՑ ԼԵԶՎԻ <<ԼԱՎԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՑԻՉ>> ՄՐՑՈՒՅԹԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.16-րդ կետի <<ա>> ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության աշխատակազմի ղեկավարի 2014 թվականի ապրիլի 8-ի N 04/07.1/3659-14 գրությունը.

կարգադրում եմ՝

1. Ստեղծել մարզի մրցութային հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնաժողովի նախագահին (Գ. Սայադյան)՝ հանձնաժողովի աշխատանքներին մասնակից դարձնել <<Արմավիր քաղաքի Զորավար Անդրանիկ Օգանյանի անվան N 5 հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության ուսուցիչ Մելանյա Լալայանին (համաձայնությամբ), Արմավիր քաղաքի N 6 հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության ուսուցիչ Անահիտ Ավետիսյանին (համաձայնությամբ):
3. Հանձնաժողովին (Գ. Սայադյան)՝ սույն կարգադրությամբ նախատեսված աշխատանքներն իրականացնել 2014 թվականի ապրիլի 14-ից ապրիլի 15-ը և արդյունքների մասին զեկուցել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին:
4. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ

Հավելված

Հայաստանի Հանրապետության Արմավիրի
մարզպետի 2014 թվականի մայիսի «15»-ի
N 32 կարգադրության

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄ

Նախագահ՝

Գ. Սայադյան - Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ

Անդամներ՝

Ա. Թովմասյան -Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի պետ,

Ժ. Բաղդասարյան -Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի առաջատար մասնագետ,

Վ. Միքայելյան -Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի առաջատար մասնագետ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Փ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ